ԵՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆՍԹՐԻՄԻՆԳ

Գենդերային մեյնսթրիմինգը կանանց և տղամարդկանց համար ցանկացած պլանավորված գործողության, քաղաքականության կամ ծրագրի արդյունքների գնահատման գործընթաց է՝բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում՝ նախքան որևէ որոշում կայացնելը: Այն պիտի տեղի ունենա ամբողջ գործընթացի ժամանակ: Դա կանանց, ինչպես նաև տղամարդկանց հուզող հարցերն ու փորձը քաղաքականության և ծրագրերի ձևավորման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման բաղկացուցիչ հարթություն դարձնելու ռազմավարություն է: Գենդերային մեյնսթրիմինգն ինքնին նպատակ չէ, այլ գենդերային հավասարության խթանման մոտեցում[1]:

Գենդերային անհավասարության և խտրականության դեմ պայքարը երկարաժամկետ մարտահրավեր է, քանի որ ենթադրում է կառուցվածքային, վարքային ու ընկալման փոփոխություններ: Չնայած որ մինչ այժմ տարբեր դերակատարներ մեծ ջանքեր են գործադրել այդպիսի փոփոխություններ նախաձեռնելու ուղղությամբ, գենդերային անհավասարությունները շարունակում են պահպանվել:

ԵՀՀ առաքելությունն է հզորացնել մարդկանց՝ էական փոփոխությունների հասնելու սոցիալական արդարության և տնտեսության ասպարեզներում և իրականացնել կոնկրետ ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց բարելավել իրենց համայնքը և կյանքը: Գենդերային հավասարության խթանումը նախապայման է նաև պայքարելու աղքատության և

1. https://www.sida.se/contentassets/3a820dbd152f4fca98bacde8a8101e15/gender-tool-mainstreaming.pdf

սոցիալական բացառման դեմ: Այսպիսով՝ գենդերային հավասարությունը ոչ միայն բազմազանության և սոցիալական արդարության խնդիր է, այլ նաև միջոց՝ տղամարդկանց և կանանց համար՝ հասնելու ավելի լավ կյանքի, ինչը ևս անկյունաքարային է ԵՀՀ գործունեության համար:

Այս քաղաքականությունը մշակվել է որպես ԵՀՀ ջանքերի համակարգում՝ ներգրավելու գենդերային բաղադրիչը ԵՀՀ ներքին և արտաքին գործունեության և կազմակերպչական ընթացակարգերի մեջ, ինչպես նաև բոլոր գործողություններում: ԵՀՀ-ն գենդերային հավասարությունը դիտարկում է որպես մարդու իրավունք, և, հետևաբար, դրա ձևավորման ու զարգացման հիմքում ընկած մոտեցումը հիմնված է մարդու իրավունքների սկզբունքների և ստանդարտների վրա՝ առանց անտեսելու գենդերային հավասարության ապահովման համար կարևոր այլ գործոնները:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԵՀՀ-ն գենդերային հավասարության իր աշխատանքներն իրականացնում է՝ առաջնորդվելով մարդու իրավունքների միջազգային չափանիշներով և սկզբունքներով: Դրանք ներառում են.

- մարդու իրավունքների միջազգային մեխանիզմների (պայմանագրային մարմիններ, հատուկ ընթացակարգեր, Համընդհանուր պարբերական դիտարկում) ստանդարտներին ու առաջարկություններին որպես գենդերային հավասարության ռազմավարության և քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկման ուղեցույց հետևելն ու դրանցով առաջնորդվելը.
- կանանց և տղամարդկանց, տղաների և աղջիկների միջև իշխի (իշխանական հարաբերությունների) դինամիկայի բացահայտում հետազոտությունների միջոցով և այդ դինամիկայի հիմնական պատճառների ուսումնասիրություն և վերհանում.
- ծրագրերի նախապատրաստման, իրականացման և գնահատման ժամանակ կանանց ներգրավում, մասնա-

վորապես, ծրագրի իրականացման փուլերում առավել մարգինալացված խմբերի՝ ազգային ու կրոնական փոքրամասնությունների և այլ համայնքների ակտիվ և իմաստալից մասնակցություն, ինչպես նաև, տվյալների տարանջատում՝ ըստ գենդերի.

- կանանց՝ մարդու իրավունքների հաշվետվողականության ամրապնդում՝ ջատագովության միջոցով ապահովելով, որպեսզի գենդերային հավասարությանը և կանանց իրավունքներին առնչվող հիմնախնդիրներն ինտեգրվեն ներքին իրավական համակարգերում և ներառվեն համապատասխան քաղաքականությունների մեջ.
- տարբեր դերակատարների, ներառյալ՝ երիտասարդության, քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացում, կրթություն, քննադատական մտածողության սերմանում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գենդերային հավասարության հարցում առաջընթացի հասնելը պահանջում է աշխատել քաղաքացիական հասարակության, մասնավոր սեկտորի, կառավարության, միջազգային կազմակերպությունների, ներառյալ՝ ՄԱԿ-ի գործակալությունների հետ: Տարիների աշխատանքի արդյունքում ԵՀՀ-ն մոբիլիզացրել և կառուցել է ցանցեր քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի հետ, որոնք ի զորու են հասցեագրել գենդերային հավասարության խնդիրները:

ԵՀՀ-ն մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հետ համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու մեծ փորձ ունի: ԵՀՀ-ն կշարունակի համագործակցել մարդու իրավունքների և գենդերային հավասարության օրակարգով հայաստանյան և միջազգային կազմակերպությունների հետ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՀՀ-ն ինտեգրում է մարդու իրավունքները, գենդերային հա-

վասարությունը և կանանց զորեղացումը (իշխանավորումը) ծրագրերի մշտադիտարկման ու գնահատման մեջ հետևյալ չափորոշիչներով.

- Գենդերային հավասարությունն ու կանանց իշխանավորումը ինտեգրված են վերլուծության գնահատման շրջանակներում, և գնահատման չափանիշները կազմված են այնպես, որ ապահովվի գենդերային հավասարության և կանանց իշխանավորման վերաբերյալ տվյալների հավաքումը:
- Գենդերային հավասարությունն ու կանանց իշխանավորումը ինտեգրված են գնահատման չափանիշներում, և կան կոնկրետ գնահատման հարցեր, որոնք անդրադառնում են նրան, թե ինչպես են գենդերային հավասարությանն առնչվող հիմնահարցերը ինտեգրվել ծրագրի ձևավորման, պլանավորման, իրականացման և ձեռք բերված արդյունքների մեջ:
- Ընտրվում են գենդերային խնդիրներին արձագանքող մեթոդաբանություն, գործիքներ և տվյալների վերլուծության մեթոդներ:
- Գնահատման արդյունքներում, եզրակացություններում և առաջարկություններում արտացոլվում է գենդերային վերլուծությունը: